



17.07.2014թ

գ. Նոր Կեսարիա

Տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նոր Կեսարիա համայնքի ընդհանուր ժողով:

Ժողովին մասնակցում էին համայնքի բնակիչները, ավագանու անդամները:

Ժողովի նախագահ՝ Գ. Գրիգորյան 

Քարտուղար՝ Ն. Թեմուրյան 

Օրակարգ- Նոր Կեսարիա համայնքի ղեկավար Հ. Գալստյանի հաշվետվությունը 2014թ 1-ին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների մասին:

Զեկուցողը մանրամասնորեն ներկայացրեց Նոր Կեսարիա համայնքում 2014 թ. 1-ին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների մասին հաշվետվություն:

Հաշվետվությունում վերհանվեց համայնքի սոցյալ- տնտեսական խնդիրների լուծման ուղղությամբ համայնքի ղեկավարի, գյուղապետարանի աշխատակազմի և ավագանու կողմից ձեռնարկված միջոցառումները, ինչպես համայնքի բյուջեյի կատարման, այնպես էլ համայնքի առկա խնդիրների լուծման ուղղությամբ:

Հաշվետվության շուրջ ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին համայնքի ավագանու անդամները, բնակիչները: Համայնքի բնակչության կողմից առաջարկվեց համայնքի ղեկավար Հ. Գալստյանի կողմից կատարված աշխատանքները գնահատել լավ:

Համայնքի ընդհանուր ժողովը որոշեց՝

1. Համայնքի ղեկավար Հ. Գալստյանի 2014թ . 1-ին կիսամյակի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ տրված հաշվետվությունը գնահատել լավ:


2. Համայնքի ղեկավարը ներկայացրեց 2014 թ.-ի հավաքագրված եկամուտների չափը՝

Եկամուտների ընդհանուր հավաքագրումը կազմում է՝ 52 % :

3. Պահանջել համայնքի ղեկավար Հ. Գալստյանից և գյուղապետարանի աշխատակազմից 2014թ. ընթացքում իրենց 2 -րդ կիսամյակում գործունեությունը նպատակաուղղել համայնքում առկա հիմնախնդիրների լուծման և համայնքի բյուջեյի սեփական եկամուտների հավաքագրման

ամբողջական կատարման և այդ մասին պարբերաբար իրազեկ պահել համայնքի ավագանուն և բնակչությանը:

4. Ապահովել համայնքի սոցյալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագրի նախատեսված հիմնախնդիրների իրականացումը:

Ժողովի նախագահ՝ Գ. Գրիգորյան 

Քարտուղար՝ Ն. Թեմուրյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Նոր Կեսարիա համայնքի ղեկավար Հրայր Գալստյանի 2014թ. 1-ին կիսամյակի կատարած աշխատանքների մասին:

Հարգելի համագյուղացիներ, ավագանու անդամներ, հյուրեր Ձեզ եմ ներկայացնում 2014թ. 1-ին կիսամյակի իմ կողմից Նոր Կեսարիա համայնքում կատարած աշխատանքների և բյուջեյի կատարման մասին հաշվետվություն:

Նոր Կեսարիա համայնքը կազմված է 270 տնային տնտեսությունից և ունի 1619 բնակիչ:

Ղեկավարվելով “Տեղական ինքնակառավարման մասին” և “Համայնքային ծառայության մասին” Հայաստանի Հանրապետության օրենքներով, ենթաօրենսդրական ակտերով, համայնքի ավագանու և գյուղապետարանի կանոնադրությամբ և ընդունված որոշումներով համայնքի ՏԲՄ մարմինները իրենց գործունեությունը 2014 թ. 1-ին կիսամյակին հիմնականում նպատակաուղղել են համայնքի բնակչության հոգսերի և խնդիրների լուծմանը, ինչպես նաև համայնքում առկա սոցյալ տնտեսական խնդիրների որոշման և բարելավման հարցերին:

Չնայած 2014թ. 1-ին կիսամյակի համայնքում չի ներդրվել որևէ խոշորամասշտաբ ծրագիր և համայնքին չի ցուցաբերվել համապատասխան աջակցություն համայնքում առկա հիմնախնդիրների լուծմանը, որոնք նախատեսված էին համայնքի սոցյալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագրով, այնուամենայնիվ համայնքի սուղ միջոցներով կատարվել են մի շարք աշխատանքներ,:

Կիսամյակի ընթացքում համայնքի բյուջեյի միջոցներից համայնքի անապահով ընտանիքներին հատկացվել է սոց օգնություն : Հունվարի 6-ին համայնքի Սուրբ Բարսեղ Կեսարացի եկեղեցում տեղի ունեցել պատարագ :

<<Լավագույնն իր ոլորտում >> մրցույթ մրցանակաբաշխությունը կազմակերպելու համար <<Ամենկ>> հասարակական կազմակերպությանը ցուցաբերվել է ֆինանսական աջակցություն:

Մարտի 8-ին դպրոցում տեղի է ունեցել մեծ միջոցառում նվիրված մայրության և գեղեցկության օրվան , համայնքի ղեկավարի կողմից տրվեցին նվերներ և ծաղիկներ , իսկ համայնքի մյուս կանանց բաժանվեցին ծաղիկներ :

Ապրիլի 20-ին Սուրբ Զատիկի տոնի կապակցությամբ մեծ շուքով նշվեց Քրիստոսի հարության տոնը, համայնքի միջոցներից գումար է նվիրաբերվել Արմավիրի Թեմի Առաջնորդարանին , որպեսզի կահավորվի համայնքի 2011 թ –ի Օծված Սուրբ Բարսեղ Կեսարացի Եկեղեցին :

Մայիսի 9-ին տեղի ունեցավ Հաղթանակի և Խաղաղության օրվան նվիրված միջոցառում , կատարվեց հուշանվերների հանձնում Նոր Կեսարիա համայնքի Հայրենական Պատերազմի մասնակիցների , զոհված ազատամարտիկների ընտանիքներին, Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության և Լեոնային Ղարաբաղի Ազատագրման մարտերի մասնակիցներին և հաշմանդամներին :

Տեղի ունեցավ տոնական համերգ և տոնական ճաշկերույթ : Համայնքի միջոցներից գումար է նվիրաբերվել Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի <<Արաբոյի և Ֆիդայիների թանգարան>>-ին:

Գյուղը զագաֆիկացված է, գործում է ակումբ-գրադարանը, գործում է նաև բուժ ամբուլատորիան , չունենք միայն մսուր –մանկապարտեզ :

Կայացել է համայնքի սեփականություն հանդիսացող հողերի աճուրդ վաճառք , որի ողջ հասույթը տրամադրվելու է համայնքում նախակրթարան հիմնելու և ընթացքի մեջ է նախագծային աշխատանքները: Կատարվելու են ցերեկային լույսերի վերանորոգման աշխատանքներ:

Առկա է 3 առևտրի սրահ և 2 դեղատուն , որը ապահովում է բնակչության առօրյա կարիքները:

Համայնքում լուրջ հիմնախնդիր է համարվում բնակչության զբաղվածության ապահովումը, գյուղում չի գործում որևէ արտադրամաս կամ աշխատանքի օբյեկտներ, որը և պատճառ է հանդիսանում երիտասարդության գյուղում չմնալուն: Կիսամյակի ընթացքում չի կառուցվել որևէ նոր բնակարան, տարվա ընթացքում եղել է 9 ծնունդ: Գյուղում գործում է մեկ միջնակարգ դպրոց՝ թվով 194 աշակերտ, 1-ին դասարանում սովորում են 23 , իսկ ավարտական դասարանում՝ 12 աշակերտ: Դպրոցում ընդգրկված են 34 աշխատողներ: Համեմատած բարվոք վիճակում է գյուղի բուժ-ամբուլատոր կետը, որում աշխատում են 2 բուժքույրեր: Գյուղապետարանի աշխատողները բաղկացած են 13 հոգուց : Բնակչության մեծամասնությունը զբաղված է անասնապահությամբ և հողագործությամբ:

Մարտի 30-ից ապրիլի 2-ը տեղի ունեցավ ցրտահարություն , որը շատ մեծ վնաս հասցրեց գյուղատնտեսությանը:

Գյուղացիների վնասը մեղմացնելու նպատակով ներկրվել է սերմացուներ և ազոտական պարարտանյութ, դիզվառելիք:

Գյուղատնտեսական աշխատանքների աջակցելու նպատակով համայնք է ներկրվել 140 տոննա ազոտական պարարտանյութ և 32 տոննա դիզ. վառելիք և մատչելի գներով տրամադրվել է համայնքի ազգաբնակչությանը : Կատարվել են աշխատանքներ ոռոգման ջրի հիմնախնդիրների լուծման գործում և դրա շնորհիվ կատարվում է ոռոգման ջրի նորմալ սպասարկում :

Ելնելով կատարված աշխատանքներից և առկա բացթողումներից հավաստիացնում են համայնքի բնակչությանը, համայնքի ավագանուն, որ 2014թ. 2-րդ կիսամյակի ընթացքում անհրաժեշտ միջոցներ կձեռնարկվեն համայնքում առկա հիմնախնդիրների լուծման, բյուջեյի սեփական եկամուտների ապահովման գյուղապետարանի աշխատակազմի աշխատանքների բարելավման և պատասխանատվության բարձրացման ուղղությամբ:

Գյուղի գլխավոր հիմնախնդիրներից մեկն է խմելու ջրի ներտնտեսային ցանցի ոչ բարվոք վիճակը :

ՆՈՐ ԿԵՍԱՐԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ն. ԳԱԼՍՅԱՆ